ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԱՆՎՃԱՐ) ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.01.01-6

ք. Երևան «30 » _01_ 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հրազդանի արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրեն Ա. Սարիբեկյանի, ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն» ծրագրի շրջանակներում Հրազդանի արհեստագործական ուսումնարանի միջին տարեկան 96 սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի 09.03.01.01 <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում>> ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում:

2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է մինչև 43723000 (քառասուներեք միլիոն յոթ հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3 ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4 ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	«Հրազդանի արհեստագործական
ք. Երևան, Վ. Սարգսյան 3	ուսումնարան» ՊՈԱԿ
ՀՀ ՖՆ գործառնական վարչության	ք. Հրազդան, Միկրոշրջան 94
ՀՎՀ 900011005452	ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Նախարարության գլխավոր քարտուղար	ՀՎՀ 900128000123
---------- Ն. Հարությունյան	Տնօրեն ---------- Ա. Սարիբեկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ